



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա

Ուսուցչի առարկայական և մասնագիտական իտելիքների ու հմտությունների կատարելագործումը «ՀՀ հիմնական հողատիպերը» թեմայի ուսումնասիրման հետազոտական աշխատանքների ընթացքում:

Առարկա՝ Աշխարհագրություն

Հեղինակ՝ Վարդուհի Սարգսյան

Մարզ՝ Շիրակ

Ուսումնական հաստատություն՝

Հովունիի միջն. դպրոց

Բովանդակություն

Ներածություն -----	2
ՀՀ հողերի ընդհանուր բնութագիրը -----	4
Կիսաանապատային գորշ հողեր -----	5
Կուլտուր – ոռոգելի հողեր -----	6
Լեռնային շագանակագույն հողեր -----	7
Լեռնային սևահողեր -----	9
Անտառային հողեր -----	10
Հողերի դեգրադացիա -----	15
Եզրակացություն -----	17
Գրացանկ -----	18

Ներածություն

Աշխարհագրական գիտության առաջընթացը, ուսումնասիրման բնական և հասարակական տարածական կառուցվածքային միավորումների և օբյեկտների բազմազանությունը, աշխարհագրության միջոցով դասավանդվող համամոլորակային, տարածաշրջանային և տեղական բնահասարակական հիմնախնդիրները, դրանց անընդհատ փոփոխությունները ու զարգացման ժամանակակից միտումները, վերջիններիս բովանդակության, մանկավարժորեն հարմարեցման և դասավանդման բազմազան ու նորովի մոտեցումներ են առաջադրում աշխարհագրության ուսուցիչների աշխատանքային գործունեության ընթացքում:

Թեմայի արդիականությունը Աշխարհագրության դասավանդման ժամանակակից մոտեցումներում գերակշռում են տեսական նյութերի նորովի մեկնաբանությունները՝ դրանց կիրառական հնարավորությունների օգտագործման և սովորողներին ավելի տեսանելի ու ընկալելի դարձնելու, այլընտրանքային, ոչ ստանդարտ դատողությունների ամրապնդման և սովորողների կողմից համակարգչային և տեխնոլոգիական լուծումների ու անհատական կամ խմբային հետազոտությունների շնորհիվ նպաստում են ինքնուրույն եզրահանգումների:

Կարևորում է նաև ուսուցիչների կողմից բարձր տեխնոլոգիաների յուրացման և դասապրոցեսում համալիր կիրառման անհրաժեշտությունը, որպես արդյունավետ ուսուցման կազմակերպման միջոց: Աշխարհագրության դասավանդման տեսանկյունից կարևորվում է Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի /ԱՏՀ/ կիրառումը թեմատիկ ուսումնասիրությունների, տվյալ տեղանքի բաղադրիչների ճանաչման, դիտարկումների, չափագրման, բնահասարակական համալիրների բազմակողմանի հետազոտման և այլ տեսանկյուններից:

Աշխատանքի նպատակը

. Բարձրավել ուսուցիչների մասնագիտական և հոգեբանամանկավարժական պատրաստվածության մակարդակը, կատարելագործել նրանց ակադեմիական մանկավարժական կոմպետենտությանը, ապահովել շարունակական մասնագիտական զարգացում:

. Ինքնակրթության, ինքնուրույն հետազոտական և ստեղծագործական աշխատանքների միջոցով զարգացնել մասնագիտական կարողությունները և ինքնադրսևորման կոմպետենցիաները:

. Ուսուցման գործընթացը իրականացնել պլանավորած արդյունքների նպատակադրման /ուսուցման ռազմավարություն/ և այդ տեսանկյունից սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման և ծանոթ ու անծանոթ իրավիճակներում դրա նպատակային կիրառման հիման վրա:

Աշխատանքի խնդիրները:

. Ուսուցիչների մեջ ձևավորել ուսուցման գործընթացում մատուցվող բովանդակության ուսումնամեթոդական խնդիրները առանձնացնելու, դրանց ստեղծագործաբար մոտենալու, սովորողների խմբային և անհատական կարիքներին հարմարեցնելու, ինչպես նաև տեխնիկական, ցուցադրական, փորձարարական, դաշտային ու դասարանային և այլ ուսումնաօժանդակ միջոցներով այդ խնդիրները լուծելու կարողությունները:

. Բարձրացնել ուսուցիչների կողմից ուսուցման գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների, աշխարհագրական տեղեկատվական համակարգերի կիրառման կարողությունների մակարդակը:

. Բարձրացնել ինքնուրույն հետազոտական աշխատանքներ կատարելու, դրանց արդյունքները մշակելու և դրանք գիտամանկավարժական հենքի վրա ներկայացնելու կարողությունները:

. Ուսուցանվող ծրագրային թեմայից կախված սովորողների համար մշակելու լրացուցիչ ուսումնական նյութեր՝ հաշվի առնելով տվյալ դասարանում յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքները:

Ակնկալվող արդյունքներ

. Տիրապետել աշխարհագրության ուսուցման արդյունավետ մեթոդների և հնարների:

. Չետևողականորեն կատարելագործել իր առարկայական մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով համագործակցել գործընկերների հետ, իրականացնել ստեղծագործական, հետազոտական և փորձարարական աշխատանքներ:

ՀՀ հողերի ընդհանուր բնութագիրը

Հայաստանի լեռնային բարդ ռելիեֆը, ոչ մեծ տարածությունների սահմաններում մակերևույթի ձևերի և բարձրությունների ուժեղ տատանումները, երկրաբանական տարակազմ նստվածքները, ինչպես նաև ջրա-ջերմային տարբեր պայմանները նպաստել են ոչ միայն կլիմայի ու բուսածածկույթի բազմատիպիությունը, այլև խայտաբղետ հողային ծածկույթի առաջացմանը: Վերջինիս ձևավորմանն փոփոխությանը նշանակալից չափով նպաստել է նաև մարդու կողմից հողերի դարավոր օգտագործումը, երկրագործության տարբեր սիստեմների կիրառումը և հատկապես ոռոգումը: Սակայն տարածքի ցածրադիր մասերից դեպի լեռնագագաթները բարձրանալիս հողագոյացման հիմնական գործոնների՝ ռելիեֆի, կլիմայի երկրաբանական տարրեր գոյացությունների և բուսածածկույթի հաջորդաբար, ուղղաձիգ գոտիական տեղաբաշխվածությունը նպաստել են հողերի խոշոր խմբերի՝ գենետիկական տիպերի օրինաչափ զարգացմանը՝ նույնպես ուղղաձիգ գոտիականությամբ: Ամենաերիտասարդ հողային առաջացումներից պետք է համարել Արարատյան դաշտի և լեռնային գետերի հովիտներում ու նրանց դարավանդներում ձևավոնված գետահովտային հողերը: Հողագոյացման առանցքին գործոններով, այդ թվում և հասակային տարբերություններով պայմանավորված տարակազմ հողածածկույթի համար բնորոշ է նաև լավային նստվածքների և բերվածքների տակ թաղված հնագույն՝ ռելիկտային հողերի գոյությունը, որոնք հաճախ հանդիպում են Արարատյան գոգավորություններում, Շիրակի դաշտում և այլ վայրերում: Հանրապետության հողային ծածկույթի վերաբերյալ որոշ տեղեկություններ մեզ հաղորդել են հին հունական և արաբական աշխարհագրագետները և պատմաբանները /Ստրաբոն, Քսենոֆոնտ, Իբն-Ալֆակի/, սակայն հողածածկի վերաբերյալ ավելի ստույգ տվյալների կարելի է հանդիպել 19-րդ դարի հետախույզների, աշխարհագրագետների և պատմաբանների աշխատություններում: Այնուհանդերձ Հայաստանի հողերի սիստեմատիկ ուսումնասիրությունը և նրանց աշխարհագրական տարածվածության առանձնահատկությունների բացահայտումը հիմնականում սկսվել է 1924 թվականից: Հաշվի առնելով հողերի ուղղաձիգ գոտիականության և նրանց գյուղատնտեսական օգտագործման առանձնահատկությունները, ինչպես նաև սույն աշխատությունում ֆիզիկա-աշխարհագրական շրճանների շարադրման ընդունված հաջորդականությունը հողերի գենետիկական տրպերի համառոտ նկարագրությունը տրվում է սահմանափակ խոնավացմամբ բնորոշվող հողագոյացման կարգով:

Կիսաանապատային գորշ հողեր

Գորշ կիսաանապատային /լիտոգեն/ հեղերը զբաղեցնում են Կարմրաշենի և Եղվարդի սարավանդների ցածրադիր, փոքրաթեք բլիա-ալիքավոր հարթությունների, Երանոս և ՌԻԹԻ լեռների ստորին ճյուղավորությունների, 800-1050 մ բարձրության տարածքները, գորշ կիսաանապատային հողերը առանձին կղզյակներով տարածվում են Արարատյան դաշտում Արմավիր, Խոր Վիրապ և Դահնա ժայռապատ բլուրների շրջանում: Այդ հողերը զբաղեցնում են սահմանափակ տարածք և զուրկ են գրունտային սնուցումից:

Տվյալ հողերի գոտին ձևավորվում են ցամաքային երբեմն նաև խիստ ցամաքային կլիմայի և կիսաանապատային բուսածածկույթի պայմաններում որտեղ գերակշռում է կիսաթփուտային օշինդրը: Գոտու ցածրադիր մակերեսում հարթություններում հատկապես ծանր մեխանիկական կազմ ունեցող մայրատեսակների վրա բուսածածկում գերակշռում են աղասեր տեսակները, որոնք զգալի տարբերություններ են մտցնում հողերի հատկությունների ձևավորման փուլում:

Հողակազմող մայրատեսակները հիմնականում ներկայացված են կմախքով և քարաբեկորներով հարուստ Էյուվիալ և Էյուվիալ - դեյուվիալ կարբոնատային կավաավազներով որոնք հաճախ պարունակում են գիպս և հեշտ լուծվող աղեր: Ռեիլեֆի բացասական տարրերում զարգացել են կմախքային նյութերով աղքատ, հզոր, ծանր ակվավազային թույլ կարբոնատային կամ կրազուրկ դեյուվիալ ծագում ունեցող մայրատեսակները: Այդ մայրատեսակները սովորաբար գիպսագերծ և աղազերծ են: Մինչև վերջին տարիներս այս գոտու հողերը խիստ քարքարոտության և սահմանափակ խոնավության պատճառով օգտագործվում էին ոչ ինտենսիվ: Ներկայումս մելիորացման և ոռոգման պայմաններում այդ հողերում հաջողությամբ աճում և բարձև բերք են տալիս խաղողի վազը, կորիզավոր պտուղները և այլ ջերմասեր տեխնիկական կուլտուրաները: Սահմանափակ խոնավեցման և ուժեղ գոլորշացման հետևանքով բնական բուսական ծածկույթը թույլ է զարգանում և հողում թողնում է քիչ քանակությամբ օրգանական մնացորդներ: Դրա հետևանքով հողերի պրոֆիլում կուտակվում է աննշան քանակի հումուս: Էյուվիալ և Էյուվիալ-դեյուվիալ մայրատեսակների վրա զարգացող հեղերի կտրվածքի ոչ խոր և սահմանափակ խոնավացումը նպաստել է նրանցում կարբոնատների, գիպսի և հաճախ նաև հեշտ լուծվող աղերի կուտակմանը:

Գորշ կիսաանապատային հողերն արդյունավետ օգտագործելու համար անհրաժեշտ է նրանց արմատական ակտիվ շերտն ազատել քարերից ոչնչացնել ցեմենտացած շերտը խոտացանության միջոցով բարելավել հողի կառուցվածքը, կիրառել ոռոգում և պարարտացում:

Կուլտուր – ոռոգելի հողեր

Ոռոգելի մարգագետնային հողերի շարքը դասվում են կիսաանապատային գոտում զարգացող այն առաջացումները որոնք ժամանակ առ ժամանակ ունեն գրունտային սնուցում: Այդ հողերը ձևավորվել են Արաքս գետի և Նրա ձախակողմյան վտակների բերվածքների վրա, մարդու դարավոր ակտիվ ներգործության պայմաններում: Հիշյալ հողերը գտնվում են Արարատյան դաշտի 800-900մ բարձրության՝ Արաքս գետի և Հոկտեմբերյանի, Ներքին Հրազդանի ու Արտաշատի ջրանցքների միջև պարփակված տերիտորիան: Այդ հողերը նույնպես զբաղեցնում են սահմանափակ տարածություն:

Ոռոգելի մարգագետնային հողերի տերիտորիան որը հյուսիս – արևմտյան, հյուսիսային և հյուսիս – արևելյան կողմից սահմանակցվում է գորշ կիսաանապատային հողերի գոտուն, իր կլիմայական պայմաններով նման է վերջինիս, միայն տարբերվելով ավելի չորությամբ և բարձր ջերմային պայմաններով: Հիշյալ հողերը ձևավորվելով չորորդրական ժամանակաշրջանի այլովիալ և այլովիալ – պրոյորվիալ բերվածքների հողմահարման կեղևի վրա, իրենց հարատև զարգացման ընթացքում ենթարկվում են գրունտային և մակերեսային ջրերի պարբերական ազդեցությանը: Խոնավացման նման ռեժիմի պայմաններում հողերը հարստացել են իռիգացիոն բերվածքներով՝ կարբոնատներով, օրգանական նյութերով, տղմային ֆրակցիայով, սննդանյութերով, հատկապես կալիումով և մոխրանյութերով: մյուս կողմից գրունտային խոնավացման ազդեցության տակ անաէրո պրոցեսի և դրանով պայմանավորված գլեացման երևույթի զարգացման հետևանքով հողերի ստորին հորիզոններում և մայրատեսակներում տեղի է ունեցել երկաթի վերականգնում: Հանքայնացված գրունտային ջրերի ազդեցությամբ տակ առանջին զանգվածներում զարգացել են հողեր որոնց միջին կամ ցածր շերտերում ձևավորվել են աղակալած - ալկալիացած հորիզոններ:

Այսպիսով Արարատյան դաշտի ոռոգելի մարգագետնային հողատիպը հիմնականում զարգացել է ինչպես գրունտային այնպես էլ մակերեսային խոնավացման ոռոգման ռեժիմների համատեղ ներգործությամբ, միայն տվյալ շրջանի հյուսիս - արևմտյան և հյուսիսային հատվածներում:

Ամբողջությամբ վերցրած ոռոգելի մարգագետնային հողերը բնութագրվում են հզոր, իսկ առանձին դեպքում նաև գերհզոր ագրոռոգումային հորիզոնով, վերին շերտում թույլ բայց ամբողջ պրոֆիլի խորությամբ գրեթե միանման հումուսայնությամբ գենետիկական հորիզոնների հազիվ նկատելի զատորոշմամբ կամ համայրա բացակայությամբ, վերին շերտում գորշա – դարչնագույն, իսկ միջին շերտի կապակցությամբ, պրոֆիլի համեմատաբար թույլ, բայց հավասար կարբոնատացվածությամբ և իյուվիալ – կարբոնատային հորիզոնի բացակայությամբ: Մեծ մասամբ ագրո - ոռոգումային հորիզոնը նկատելիորեն փոխանցվում է հողմահարման թույլ ենթարկված շերտավոր բերվածքին, միայն բազմամյա տնկիների երկարատև մծակմաբ ծնորհիվ հողերում նկատվում է մայրատեսակի զգալի կերպարանափոխություն:

Չողերի դարավոր մշակումը նպաստել է հանքային մասի եռանդուն հողմահարմանը, կավային մասնիկների ավելացմանը, նրանց կենսաբանական ակտիվության մեծացմանը և մոխրանյութերով ու սննդանյութով հարստանալուն: Այդ երևույթներով պետք է բացատրել ոռոգելի մարգագետնային հողերի բարձի բերքատվության առկայությունը և նրանց կուլտուրականացված վիճակը:

Ոռոգվող մարգագետնային հողերի սահմաններում նայած գրունտային խոնավեցման մասնակցությունը հողագոյացման պրոցեսին, կարելի է տարբերակել՝ վաղեմի ոռոգելի մարգագետնային, ոռոգելի մարգագետնային և այլ ենթատիպեր: Տվյալ ենթատիպերի ներսում առանձնացվում են կավավազային, կավային, կապակցված, խորքային, կրազուբ, կոպճակին հողեր:

Լեռնային շագանակագույն հողեր

Չոր տափաստանային գոտու շագանակագույն հողերը զարգանում են Արարատյան գոգավորության 1050 – 1500մետր բարձրության ալիքավոր սարավանդում, միջլեռնային գոգավորություններում ր նրանց հարող կտրտված լեռնալանջերում: Շագանակագույն հողերի գոտուն բնորոշ է խիստ մասնատվածությամբ և հիմնականում հարավային ու հարավ – արևելյան ընդհանուր դիրքադրությամբ: Դրանք մեծ մասիվներով հանդիպում են Արագած – Գեղամա լեռնալանջերում, Վայքում և Չանգեզուրում, Թալինի, Աշտարակի, Աբովյանի, Արարատի, Եղեգնաձորի և Սիսիանի վարչական շրջանների տիրիտորյաներում: Չիճյալ հողերի, որոնք լռնային սևահողերի հետ միասին կազմում են հանրապետության երկրագործության հիմնական բազան գտնվում են շուրջ 423 հազ. հեկտար տարածություն և զուրկ են գրունտային խոնավեցումից:

Կլիմայական տեսակետից տվյալ հողերի գոտու համար բնորոշ է չոր չափավոր կլիման:

Անմշակ շագանակագույն հողերը զարգանում են չոր տափաստանային տարախոտա – հացազգիների համեմատաբար նոսր բուսածածկույթի տակ, որի կազմում հաճախ մասնակցում են կիսառվյուտային տարախոտերի ներկայացուցիչները:

Գոտու կտրտված լեռնային ռելեֆը, լանջերի տարբեր դիրքադրությունը, սահմանափակ տեղումները, համեմատաբար բարձր ջերմությունը, գոլորշիացման և ներհողային ու մակերեսային հոսքերի ձևերով ջրի նշանակալից կորուստը, ինչպես նաև տարածք ծածկվածությունը ճեղքավոր երիտասարդ ապարներով, նպաստել են ոչ հզոր և քարքարոտ հողմահարման կեղևի ու մայրատեսակների ձևավորման և դրանց համապատասխան հողերի զարգացմանը: Միայն միջլեռնային իջվածքներում գոգավորություններում, որտեղ հողմահարման նյութերի ու խոնավության կուտակման համար կան նպաստավոր պայմաններ, ձևավորվել են թույլ կարբոնատացվաց կամ կրազուրկ, ոչ քարքարոտ հզոր մայրատեսակներ և հողեր: Սահմանափակ և անկայուն խոնավացման պայմաններում զարգացող նոսր բուսական ծածկոցը հողում թողնում է ոչ մեծ քանակի բիոմասսա, որի քայքայումը և կերպարանափոխումը հանգեցնում է հողերի թույլ և ոչ խորը հումուսացման: Անկայուն խոնավացումը իր հերթին նպաստում է հողագոյացման և հողմահարման նյութերի ոչ ինտենսիվ միգրացիայի ու նրանց հավասարաչափ կուտակմանը հողի ամբողջ շերտում: չոր տափաստանային հողագոյացման պրոցեսում նյութերի կենսաբանական շրջանառության հետևանքով հողաշերտում տեղի է ունենում նաև մոխրանյութի և հատկապես կարբոնատային միացությունների նշանակալից կուտակում:

Գորշ կիսաանապատային հողերը առանձնանում են հումուսային հորիզոնի ոչ մեծ հզորությամբ, ջրակայուն ագրերատների սահմանափակ քանակով, հումուսի փոքր պարունակությամբ, որում գերակշռում են համեմատաբար թույլ կոնդենսացված մեխանիկական կազմ, բավական հարուստ են ընդհանուր ազոտով, ֆոսֆորով և կալիումով սակայն թույլ են ապահովված հեշտ հիդրոլիզվող ազոտով և մատչելի ֆոսֆորով:

Դեյուլվիալ նստվածքների վրա ձևավորված հողերը բնութագրվում են հումուսային հորիզոնի զգալի հզորությամբ 40 – 60 սմ, բայց կուտակման հորիզոնի սակավհումուսացվածությամբ, կրազերծվածությամբ կամ պրոֆիլի թույլ կարբոնատությամբ, գենետիկական հորիզոնների թույլ զատորոժմամբ, միջիմ և միջինից մեծ կլանունակությամբ սակավ քարքարոտությամբ ծանր մեխանիկական կազմով չեզոքին մոտ ակտիվ ռեակցիայով, նշանակալից միկրոագրեգատացված և չեն պարունակում գիպս և հեշտ լոծվող աղեր: Սրանց հատուկ է ամրացվածություն միջին և միջինից բարձր տեսակարար կշիռ միջին խոնավություն և թույլ ներծծիչ հատկություն: Հողերը մեծ մասմբ հեշտ հիդրոլիզվող ազոտով թույլ, մատչելի ֆոսֆորով` թույլ և երբեմն միջակ, իսկ փոխանակային կալիումով լավ ապահովված են: Շագանակագույն հողերում հաջողությամբ մշակվում են պտղատու այգիներ, տեխնիկական կուլտուրաներ հացահատիկ միամյա և բազմամյա բույսեր:

Այդ գոտում բերրիությունը բարձրացնելու համար ցանկալի է հողերը ազատել քարերից խոտացանության միջոցով վերականգնել ստրուկտուրան զարգացնել ոռոգումը կիրառել պարարտացումը և պայթար կազմակերպել էրոզիայից պաշտպանելու համար:

Լեռնային սեւահողեր

Սևահողերը առավելապես զարգանում են Արարատյան գոգավորության, Շիրակի դաշտի, Լոռվա դաշտի, Սևանի ավազանի և Չանգեզուրի փոքրաթեք սարավանդների և համեմատաբար մեղմ թեքության լեռնալանջերի 1300 – 2400 մ բարձրությունների վրա: Ոռոգելի մարգագետնային հողերից հետո լեռնային սևահողերը առավել իրացված տիպ են և արդյունավետ օգտագործվում են գյուղատնտեսության կողմից: Այդ երևույթը հետևանք է ոչ միայն գոտու բիոկլիմայական նպաստավոր պայմանների այլ նաև ռելիեֆի համեմատաբար թույլ մասնատվածության և հենց այդ հողերի բարձր բերրիության: Հանրապետության հողային ծածկույթի գրեթե 26 տոկոստ զբաղեցված է սևահողերով:

Սևահողերի մեծ մասի համար հատկանշական է չլվացող ջրային ռեժիմ, միայն խոնավությամբ ապահովված վայրերում դիտվում է ընդհատումներով լվացող ջրային ռեժիմ: Սևահողերի զարգացումը տեղի է ունենում տափաստանային բուսական խմբավորումների ծածկույթի տակ, որտեղ լայն տարածում ունեն փետրախոտը շյուղախոտը, դաշտախոտը ոգևախոտը, տիմոֆեյի խոտը, վայրի կորնզանը և ուրիշներ: Ե՛րբ առաջացնող այդ տեսակների տարվա ընթացքում հողում թողնում են մեծ քանակությամբ բիոմասսա, որը ելանյութ է ծառայում հումուսանյութերի և մոխրանյութերի կուտակման համար: Սևահողերի մեծ մասը զարգանում է հողալկալի հիմքերով և մեկուկեսանոց օքսիդներով հարուստ էյուվիալ – դեյուվիալ և դեյուվիալ նստվածքների վրա, միայն Լոռվա տափաստանում նրանք զգալի տարածությունների վրա զարգանում են լճասառցադաշտային ավազա – կոպճային բերվածքների վրա:

Չլվացող կամ ժամանակ առ ժամանակ լվացող ջրային ռեժիմի, տարվա տաք շրջանում բավականին բարձր ջերմաստիճանի և հողերի պրոֆիլի թույլ և ոչ խորը լվացման պայմաններում բուսական մնացորդների քայքայումը և կերպարանափոխությանը հանգեցնում է հումուսակուտակմանը, որոնցում զգալի տեղ են գրավում բարձր խտացված մոլեկուլով բնութագրվող հումինաթթուները և կալցիումի հետ կապված ֆրակցիաները:

Հողմահարման և հաղագոյացման տվյալ պայմաններում համաբալին նյութերի կերպարանափոխությանը տանում է շարժուն բյուրեղային ցանց ունեցող կավային, մեծ մասամբ մոնոմորֆիլոնիտի խմբի միներալների կուտակմանը հողերի տղմային ֆրանկցիայում: Հողագոյացման տվյալ փուլը հանգեցրել է ամբողջ շերտում հումուսով և մոխրանյութերով հարուստ բավական լավ զարգացած բերրի հողերի ձևավորմանը: Չնայած տափաստանային գոտու հողագոյացման պայմանները բազմազան են և նպաստել են տարբեր հատկություններն ունեցող մի շարք ֆացիալ հողերի առաջացմանը:

Սևահողերի բերրիությունը բարձրացնելու և նրանց ռացիոնալ օգտագործելու համար նախ, անհրաժեշտ է ներդնել հողապաշտպան և հակաերոզեն միջոցառումներ սահմանափակ խոնավացման շրջաններում զարգացնել ոռոգումը ամրացնել ենթավարելաշերտ ունեցող հողերում կատարել խոր փխրեցում ինչպես նաև մշակվող կուլտուրաների կենսաբանական առանձնահատկություններին համապատասխան կիրառել հողերի պարարտացում:

Անտառային հողեր

Հայկական ՍՍՀ անտառային տնկարանները զբաղեցնում են Փոքր Կովկասի լեռների ցածրադիր և միջին բարձրության տերիտորիաները և մեծ մասսիվներում հանդիպում են Թումանյանի, Գուգարքի, Նոյեմբերյանի, Իջևանի, Շամշադինի, Գորիսի, Կապանի և Մեղրու վարչական շրջաններում: Հյուսիս – արևելյան շրջաններում նրանք գրավում են 600–2100, իսկ հարավ – արևելքում մինչև 2400 մ բարձրության տերիտորիաները: Անտառային տնկանկները փոքր մասսիվներով տարածվում են Նաև Ծաղկունյաց, Արեգունու, Արագածի և Վայքի լեռների ցածրադիր մասերում:

Անտառային հողերը իրենց մարզագետնացված և տափաստանացված հողատեսակների հետ միասին գրավում են շուրջ 632 հազ. հեկտար տարածություն և ներկայացված են 3 գենետիկական տիպերով դարչնագույն, գորշ և հումուսա – կարբոնատային:

Անտառային դարչնագույն հողեր: Սրանք զարգանում են չափավոր տաք և բքոչ կայուն խոնավությամբ առանձնացվող ու չոր թփուտներով հարուստ բոխու – կաղնու անտառային ծածկոցի պարագայում: Նման հողեր մեծ մասսիվներով հանդիպում են Փոքր Կովկասի հյուսիսային և հարավային կտրտված լեռների միջև 1500 մ բարձրության տերիտորիայում և զբաղեցնում են 531 հազ. հեկտար տարածություն: Հողերի ձրավորումը տեղի է ունենում չլվացող ջրային ռեժիմի տարեկան 400–500 մմ տեղումների և օդի ջերմաստիճանի համեմատաբար ոչ մեծ տատանումների պայմաններում:

Հողերը ձևավորվել են մեզոզոյան կրաքարերի, մերգելների, պորֆիրիտների և տուֆաբեկչիաների հողմահարման նյութերի դեյուվիալ – կարբոնատային կամ կրազուրկ կավերի, կավավազների, իսկ առանձին դեպքերում նաև հիծյալ ապառների էյուվիալ նստվածքների վրա:

Դարչնագույն հողերը բնութագրվում են հզոր պրոֆիլով երբ նրանք ձևավորվել են փուխր ապարների վրա, վերին հորիզոնի դարչնագույն փոխանցման հորիզոնի բաց – դարչնագույն գոնավորմամբ, խոր և ինտենսիվ կավայնացմամբ, վերին հորիզոնի զգալի հումուսացվածությամբ, որը թռիչքաձև նվազում է դեպի ստորին շերտ: Այդ հողերն ունեն կլանման մեծ ծավալ հագեցված հողալկալի հիմքերով, չեզոք կամ թույլ հիմնային ակտիվ ռեակցիա և լավ արտահայտված իյուվիալ – կարբոնատային հորիզոն: Ցածրադիր չոր տեղանքի պայմաններում զարգացող հողերի մայրատեսակներում հաճախ կուտակվում են գիպս և երբեմն նաև հեշտ լուծվող աղեր:

Բնա – լանդշաֆտային և բիոկլիմայական պայմանների ու դրանցով պայմանավորված հողերի պրոֆիլում կարբոնատների տեղաբաշխվածության հիման վրա տվյալ տիպի ներսում առանձնացվում են 3 ենթատիպեր՝ կրազուրկ և կարբոնատային: Հողերի մարզագետնացման և տափաստանացման պրոցեսների արտահայտվածության, ինչպես նաև մայրատեսակներից ժառանգած հատկությունների հիման վրա ենթատիպերի ներսում անջատվում են

մարգագետինացված, տափաստանացված, տափաստանացված, մերգելային, խճա – կրաքարային, կավային, գիպսակիր հողերի սեռեր: Այդ հողերն զբաղեցնում են տարբեր տարածություններ և ունեն արտադրական տարբեր հատկություններ:

Անտառային գորշ հողեր: Դարչնագույն հողերից անմիջապես վերև՝ 1300 – 1800 մ բարձրության տերիտորիաներում հատկապես հյուսիսային հյուսիս – արևմտյան և հյուսիս - արևելյան կողմնադրության լանջերում զարգացող բոխու – հաճարենու տնկիների տակ ձևավորվում են գորշ անտառային հողեր: Գորշ անտառային հողերը մեծ մասսիվներով հանդիպում են Դեբեդ, Աղստև, Յախում, Տավուշ և Խնձորուտ գետերի ավազաններում և զբաղեցնում են ընդամենը 92 հազ. հեկտար տարածություն: Հողերը զարգանում են համեմատաբար տաք և խոնավ կլիմայի ազդեցության տակ պրոֆիլի վացող ջրային ռեժիմի պայմաններում, որը հանգեցնում է առաջնային միներալների եռանդուն հողմահարմանը և հողերը ձևավորվում են ինչպես հողալկալի հիմքերով հարուստ մստվածքային ապարների կրաքարերի, կրաքարային մենգելների, այնպես էլ հրաբխածին գոյացումների տուֆաբեկչային և պրոֆիլիտների հողմահար նյութերի վրա:

Անտառային թափվածքի քայքայումից և կերպարանափոխությունից առաջացած օրգանական թթուները հողերի հանքային մասում եղած երկաթի, ալյումինումի և հողալկալի կատիոնների հետ՝ առաջացնելով օրգանական հանքային կոմպլեքս միացություններ կուտակվում են հողում և այսպիսով մասամբ չեզոքանում է այդ թթուների քայքայիչ ներգործությունը հողի հանքային մասի վրա:

Գորշ անտառային հողերի ներսում նայած բնակլիմայական պայմանների և հողերի մորֆո – գենետիկական առանձնահատկությունների տարբերությունը, կարելի է անջատել մարգագետնացված թույլ չհագեցած և ուժեղ չհագեցած ենթատրայեր: Հողերի սեռերի առանձնացումը կարելի է կատարել մակերեսային հորիզոնի հագեցվածության, տափաստանացվածության պրոֆիլի խճացվածության և մերգելացվածության ցուցանիշների հիման վրա: Գորշ անտառային հողերը թեթև լանջերի վրա տաղակայված թույլ ստրուկտուրացված են կավայնացման պատճառով ավելի հաճախ են ենթարկվում հողատարման ուստի նրանց պահպանելու և ռացիոնալ օգտագործելու համար առաջին հերթին պետք է այդ հողերում կիրառել հակաերոզիոն գործոն միջոցառումներ:

Հումուսա – կարբոնատային հողեր: Այս հողատիպը զարգանում է անտառային հողերի գոտում կարբոնատներով հարուստ մայրատեսակների՝ կրաքարերի մերդելներ հողմահարման նյութերի վրա: Առանձին դեպքերում այդ հողերը անմիջապես ձևավորվում են նաև հիշյալ ապարների վրա: Հումուսա – կարբոնատային հողերը փոքր մասսիվներով տարածված են Իջևանի, Շամշադինի, Ղափանի և այլ անտառային շրջաններում: Նրանց ընդհանուր տարածությունը կազմում է ընդամենա 8,5 հազ. հեկտար: Հողերի հանքային մասում կալցիումի կատիոնի բարձր պարունակության շնոհիվ օրգանական թթուները չեզոքանում են և կուտակվում հողի պրոֆիլում հումուսայնությունների ձևով:

Այդ հողերը աչքի են ընկնում գենետիկական հորիզոնների պարզ զատորոճմամբ, վերին հումուսակուտակման հորիզոնի մուգ – դարչնագույն և մայրատեսակի բաց գործա – սպիտակավուն գունավորվածությամբ: Շերտավոր կրաքարերի վրա զարգացող հողերի պրոֆիլը և հատկապես նրանց միջին և ստորին հորիզոնները պարունակում են տարբեր քանակության քարաբեկորներ՝ խիճ: Ֆիզիկա – քիմիական տեսակետից այդ հողերը բնութագրվում են նշանակալից հումուսացվածությամբ, վերին շերտում չեզոք իսկ ցածի շերտերում հիմնային ռեակցիայով հողալկալի և հիմքերով հագեցված կլանման միջին կամ միջինից բարձր ծավալով, համախառն ազոտի ֆոսֆորի և կալիումի զգալի պարունակությամբ: Սովորաբար հողերի ամբողջ շերտում տղմային ֆրակցիան և հիմնական օքսիդները տեղաբաշխվում են գրեթե հավասարաչափ միայն շերտավոր ապարների վրա զարգացող հողերում մակերեսային շերտի խորքում նկատվում է տղմային մասնիկների քանակի անկում: Տվյալ տիպի սահմաններում առանձնացվում են հումուսա – կարբոնատային կրազուրկ և հումուսա – կարբոնատային տիպիկ ենթատիպեր: Այդ ենթատիպերի ներսում տարբերվում են խճա – կրաքարային, մերգելային ր թույլ զարգացած հողերի սոռեր:

Մարգագետնա – տափաստանային հողեր: Տափաստանային և լեռնա – տափաստանային հողերի փոխանցման շրջանում՝ 1800 – 2400 մ բարձրության տերիտորիաների մարգագետնատափաստանային բուսական ծածկույթի տակ զարգանում է հիշյալ հողային գենետիկական տիպը, որը մի կողմից ունի տափաստանային, իսկ մյուս կողմից՝ լեռնա – մարգագետնային հողատիպերի որոշ հատկանիշներ: Տվյալ հողատիպը խոշոր զանգվաշներով հանդիպում է Հայկական հրաբխային բարձրավանդակի և Փոքր Կովկասի լեռնաշղթաների միջին գոտում և գրավում է 360 հազ. հեկտար տարածություն: Համեմատաբար ցուրտ և խոնավ լեռնային կլիմայում հարուստ բիոմասսա առաջացնող բուսական ծածկույթի տակ առաջացել են լվացող ջրային ռեժիմով, զգալիորեն հումուսացված , թույլ զատորոժվող հորիզոնի միջին հզորության և բերրի հողեր: Մարգագետնա – տափաստանային հողերը մեծ մասմբ ունեն արտահայտված հումուսակուտակման մուգ գունավորված հորիզոն, որից ցած զարգանում է համեմատաբար բաց գունավորված, սակայն բավական երկարաձգված և լավ ստրոկտուրացված փոխանցման հորիզոն: Այդ հորիզոնից ցած տարածվում է հարդա – դարչնագույն կամ դեղնա – հարդագույն անդտրոկտուր մայրատեսակը, որը հաճախ պարունակում է ապարների բեկորներ և խիճ:

Ֆիզիկա – քիմիական հատկանիշների տեսակետից այդ հողատիպը բնորոշվում է նշանակալից հումուսացվածությամբ, հումինաթթուների և ֆուլվոթթուների միանման պարունակությամբ պրոֆիլի կրազերծվածությամբ, լավ ագրեգատացվածությամբ կլանման մեծ ծավալով, չեզոք կամ չեզոքին մոտ թույլ թթվային ակտիվ ռեակցիայով, հողալկալի հիմքերով հագեցված կամ թույլ չհագեցված կլանող կոմպլեքսով ծանր կավավազային կամ կավային մեխանիկական կազմով: Նման հատկություններով բնորոշ է հիմնականում մարգագետնա – տափաստանային հողերի սևահողանման ենթատիպը որը ձևավորվում է ռեյտեֆի ավելի մեղմ էլեմենտների վրա, խոնավ, բայց ցուրտ կլիմայական պայմաններում:

Լեռնա – մարգագետնային հողեր: Լեռնա-մարգագետնային հողերը ձևավորվել են Փոքր Կովկասի հրաբխային բարձրավանդակի 2000 – 2400 մ վեր տարածվող սարահարթերում ու մասնատված լեռնալանջերերի շրջանում կարճատև զով ամառներով և խոր ձյունածածկ ունեցող երկարատև դաժան ձմեռներով կլիմայի պայմաններում: Գրունտների ուժեղ խոնավացումը և թույլ գոլորշացումը հողի մակերեսից, ու ցածր ջերմասրիճանը նպաստել են գաճաճ, բայց ուժեղ ճիմ առաջացնող հացազգա – տարախոտային և ընդավոր բույսերի զանազան խմբավորումների զարգացմանը, որոնց ազդեցության տակ ձևավորվել են լեռնա – մարգագետնային հողերը: Լվացող ջրային ռեժիմով և ճմային հողագոյացման ստադիայով բնութագրվող այդ հողերում անաէրոբիոգիսի երևույթի զարգացման հետևանքով բուսական մնացորդի հանքայնացումը և կերպարանափոխությունը հանգեցրել է հումուսանյութերի ուժեղ կուտակմանը, որոնցում գերակշռում են թույլ կոնդենսացված կառուցվածք ունեցող ֆուլվոթթուները և հումինաթթուների ավելի շարժուն միացությունները: Նման պայմաններում հողագոյացման ճմային ստադիայի զարգացումը հանգեցնում է թույլ զատորոշվող, բայց գունավորված սակավազոր և թեթև մեխանիկական կողմ ունեցող հողերի առաջացմանը: Սակայն միջավայրի բարձր խոնավեցումը գրունտների թեթև մեխանիկական կողմը և հողերում հումուսանյութերի շարժուն ու ազատ ձևերի զգալի պարունակությունը որոշակի դեր չեն խաղում նրանց հանքային մասի օքսիդների տեղաշարժման վերաբաշխման գործում: Տվյալ պայմաններում դա հետևանք է հողակալի կատիոնների զգալի պարունակության, որոնք պարբերաբար չեզոքացնում են օրգանական թթուները և առաջացնում օրգանա – հանքային միացություններ:

Այսպիսով լեռնամարգագետնային հողերը աչքի են ընկնում պրոֆիլի խիստ թույլ դատորոշմամբ, վերին հումուսակուտակման հորիզոնի դարչնագույն, փոխանցման հորիզոնի բաց - դարչնագույն և մայրատեսակի հարդագույն գունավորմամբ սակավազորությամբ խճի առատությամբ թթու ռեակցայով հումուսի խիստ բարձր պարունակությամբ, միջին և միջինից փոքր կլանուկանությամբ, ուժեղ չհագեցվածությամբ, թույլ ազրեգատացվածությամբ և թեթև մեխանիկական կազմով:

Գետահովտային հողեր: Լեռնային հովիտների նրանց դարավանդների և Սևանա լճի առափնյա տերիտորիաների այլուվիալ, այլուվիալ պրոյվիալ և այլուվիալ – լճային նստվածքների վրա զարգանում են խոնավացման տարբեր ռեժիմներ ունեցող հողեր, որոնք դասվել են գետահովտային մեկ ընդհանուր խմբի մեջ: Այդ հողերը զարգանում են տարբեր մեխանիկական կազմ ունեցող մայրատեսակների վրա, բիոկլիմայական տարբեր ռեժիմների ու տարբեր բուսական ծածկոցի պայմաններում:

Գետահովտային մշակելի հողերը, որոնք ունեն թույլ գրունտային մնուցում բնութագրվում են հետևյալ ընդհանուր մորֆո – գենետիկական հատկանիշներով, նրանք հիմնականում ունեն թույլ ձևավորված քարքարոտ և կմախքային մասնիկներ, որոնց աճում է: Նրանք մեծ մասամբ աղակալած չեն, ունեն տարբեր կլանման ծավալ, որում հաճախ զգալի տեղ է գրավում կլանված մագնեզիումը:

Գետահովտային հողերը մեծ մասամբ ունեն չեզոք կամ հիմնային ռեակցիա, հարուստ են միկրոազրեգատներով և տարբեր են իրենց մեխանիկական կազմով:

Գետահովտային հողերը խմբավորել ենք երկու ինքնուրույն տիպի՝ ճահճային և մարգարտային: Առաջին տիպի սահմաններում առանձնացվել են հումուսա – տղմային տորֆացած, հումուսա – տորֆացած, հումուսա – տղմային և տորֆային ենթատիպեր: Հողերի սեռերի առանձնացումը կատարվում է մանրահողի և կմախքի քանակի կարբոնատների պարունակության աղակալվածության և ալկալիացվածության հիման վրա: Սննդանյութերի պարունակության տեսակետից գետահովտային հողերը մեծ մասամբ թույլ են ապահովված հեշտ հիդրոլիզվող ազոտով, մատչելի ֆոսֆորով թույլ կամ միջակ իսկ փոխանակային կալիումով և ապահովված են:

Ազուտ – ալկալի հողեր Արարատյան դաշտի ինչպես նաև Մասրիկ գետի հովտի որոշ տերիտորիաներում որտեղ հանքայնացված գրունտային ջրերը մոտ 6 հողի մակերևույթին զարգացնում են հիդրոմորֆ սողային ազուտ – ալկալին հողեր: Նրանց ընդհանուր տարածքը կազմում է մոտ 25 հազար հեկտար: Բացի հիդրոմորֆ ծագում ունեցող այդ հողերից, Երևան քաղաքից հարավ – արևելք տարածված լավագույն ծագում ունեցող խայտաբղետ կավերի վրա որոնք վաղուց կտրբել ու գրունտային սևուցումից զարգացող են այսպես կոչված ավտոմորֆ ալկալի հողեր: Այս հողերն ունեն թույլ զարգացած հումուսային, բայց մորֆոլոգիապես ցայտուն արտահայտված ալկալի հորիզոն: Մեծ մասամբ ունեն կավային մեխանիկական կազմ, բարձր կլանունակություն, կլանող կոմպլեքսում զգալի քանակի նատրիումի պարունակությամբ: Նրանք առանձնանում են կոշտա – սյունաձև ստրուկտուրայով պրոֆիլի միատարր մեխանիկական կազմով մեծ խոնավունակությամբ և ազբատ սննդանյութերով:

Սողային ազուտ – ալկալի հողերի իրացումը կարելի է կատարել գիպսացման և գործարանային թթու թափուկներից՝ ծծմբական թթվի կամ երկաթի սուլֆատի օգտագործման միջոցով թեթև մեխանիկական կազմ ունեցող չեզոք սուլֆատ – քլորիդային աղուտների իրացումը հնարավոր է սովորական ջրով լվացումներ կատարելու եղանակով:

Մի շարք հետազոտողներ ժամանակին զբաղվել են նաև հողերի շրջանցման հարցում: Այդ աշխատանքները մեծ նշանակություն են ունեցել գյուղատնտեսական արտադրության ճիշտ պլանավորման ու տեղաբաշխման համար ինչպես նաև աշխարհագրական գիտության մեջ ընդհանուր բնապատմական շրջանցում կատարելու հորձում:

Հողերի դեգրադացիա

Հողերի դեգրադացիան գործընթացի համախումբ է, որը հանգեցնում է հողի, որպես բնական միջավայրի բաղկացուցիչ տարրի, քանակական և որակական հատկանիշների վատթարացմանը, հողերի բնական – արտադրական նշանակության նվազեցմանը: Հողերի դեգրադացիան դրսևորվում է հողերի ֆիզիկաքիմիական հատկանիշների այնպիսի փոփոխություններով, որ հողերուն ենբեմն վերանում է գլխավոր հատկանիշը՝ բերրիությունը: Հողերի դեգրադացիան դրսևորվում է հողերի խախտմամբ, հողատարման երևույթների ինտենսիվությամբ, հողերի աղակալմամբ, ճահճացմամբ և այլն:

Հողերի խախտումը հողային ծածկույթի մեխանիկական քայքայումն է բաց կամ ստորգետնյա եղանակով օգտակար հանածոների շահագործման շինարարական և երկրաբանահետախուզական աշխատանքների հետևանքով: Խախտված հողերի ծարթին են պատկանում տեղահանված կամ վրածածկված հումուսային շերտավոր հողերը և այն հողերը որոնք պիտանի չեն օգտագործման առանց բերրիության նախնական վերականգնման, այսինքն խախտման հետևանքով առաջնային տնտեսական արժեքը կորցրած շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության արժեքը կորցրած, շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր:

Հողատարումը՝ քամու և մակերեսային ջրային հոսքերի ազդեցության պատճառով բնահողային շերտի քայքայումն է հողաբուսական նյութերի հետագա տեղափոխմամբ և վերանստեցմամբ:

Հողերի աղակալումը ջրում լուծվող աղերի՝ ներառյալ նատրիումի և մագնեզիումի իոնների ավելցուկային կուտակման գործընթաց է, որը հանգեցնում է միջավայրի կատիոն – անիոնային կազմի փոփոխությունը:

Ճահճացումըբնահողերի ջրաբանական ռեժիմի փոփոխությունն է, որն արտահայտվում է գերխոնավացմամբ՝ հեղեղման և ջրհեղեղումների ժամանակահատվածների տևողության երկարացմամբ:

Հողային ռեսուրսների սպառման և դեգրադացիայի հիմնական պահանջ է հանդիսանում սխալ անկառավարելի հողօգտագործումը: Բնակչությունն անընդհատ աճում է, հետևաբար կենսական անհրաժեշտ նշանակության պահանջներն ավելանում են: Ավելանում է նաև բնական, այդ թվում հողային ռեսուրսների վրա ճնշումը: «Անապատացում» տերմինը նշանակում է հողերի դեգրադացիա, այսինքն հողերի կենսաբանական և տնտեսական արտադրականության պակասեցում և կորուստ: Անապատացումը բորոգ և համալիր երևույթ է կազմված բազմաթիվ պատճառահետևանքային կապերի տարբեր օղակներից: Անապատեցում է հողերի բերրիության անկումը, անտառապատ տարածքների կրճատումը, գերարածեցման հետևանքով արոտավայրերի դեգրադացումը լճերի, գետերի ջրային ռեսուրսների անխնա օգտագործումից առաջացած ճահճացումներն ու չերացումները:

Հողը կազմված է մի քանի շերտից, որոնք առաջանում են մայրական ապարների, կլիմայի, բույսերի և կենդանիների ու ռելիեֆի փոխազդեցության հետևանքով:

Հողը բարդ բնական համակարգ է որտեղ կենդանի օրգանիզմների և այլ գործոնների ազդեցությամբ տեղի է ունենում բարդ օրգանական միացությունների առաջացում և այթայում: Չափազանց մեծ է հողի դերը մարդու կյանքում: Մարդիկ հողից են ստանում այն ամենը ինչ անհրաժեշտ է իրենց կյանքի համար:

Էներգիայի մոտ 88 տոկոսը, որ մարդը ստանում է սննդի հետ, տալիս են մշակված հողերը, 10 տոկոսը ստանում են անտառներից, դաշտերից, արոտավայրերից և միայն 2 տոկոսն են ստանում համաշխարհային օվկիանոսից: Յուրաքանչյուր տարի ցամաքի մակերևույթը կորցնում է 75 մլրդ տոննա հաղ:

Տարբերում են հողերի քայքայման և ոչնչացման 4 հիմնական պատճառ՝ Էրոզիա, ոռոգման բացասական հետևանքներ, հողերի հյուծում և օտարում: Էրոզիան առաջին հերթին սկսվում է այն հողերում որտեղ բացասական է բնական բուսածածկույթը: Այն կատարում է առնվազն երկու գործառույթ: Առաջինը՝ բույսերն իրենց արմատներով ամրացնում են հողը, և երկրորդը՝ բույսերի վերգետնյա մասը նվազեցնում են ջրի և, հատկապես քամու հոսքի ուժն ու ինտենսիվությունը:

Եզրակացություն

Հայաստանի Հանրապետությունում հողերի դեգրադացիայի դեմ պայքարի ձևերը բազմազան են հիմնականում նպատակաուղղվում են գյուղատնտեսության ինտենսիվացման ծրագրերի միջոցով հողերի առավել արդյունավետ շահագործման ռազմավարության վրա: մասնավորապես ՀՀ կառավարության գյուղի և գյուղատնտեսության կայուն զարգացման ծրագրի նախագծի համաձայն`

1. հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացումը կնպաստեն նաև հացահատիկային կերային մշակաբույսերի հատկապես միամյա բարձրակարգ սերմերի ներկրեմը:
2. Առաջնային սերմաբուծության զարգացումը և մատչելի պայմաններով բարձր վերարտադրողական սերմերով ապահովվածության մակարդակի բարձրացման ծրագրերի շարունակումը և ընդլայնումը:
3. Կարևոր է համարվում գյուղատնտեսության համար առավել անբարենպաստ գոտիներում հողի մշակության համար նպատակային սուբսիդավորման ծրագրերի իրականացումը և դրանց կիրառման մեխանիզմների կատարելագործումը, ծրագրի իրականացման աշխարհագրության ընդլայնումը, որը հատկապես վերաբերում է բարձր լեռնային և սահմանամերձ գյուղական բնակավայրերին:
4. Հողային ռեսուրսների նպատակային օգտագործման առումով կարևորվում է արտադրատեխնիկական սպասարկումների վիճակի բարելավումը: Վերջինս իրատեսական է համարվում, երբ պետության համագործակցությամբ տեղի է ունենում տեղնիկական միջոցների ներմուծումը և մատչելի մեխանիզմներով գյուղատնտեսության տնտեսվարողներին տրամադրումը լիզինգային ծրագրերի իրականացումը, տեխնիկա արտադրող արտերկրյա խոշոր ընկերությունների կողմից տրամադրվող ապրանքային վարկերի միջոցով տեխնիկայի մատակարարումը:
5. Հողային ռեսուրսների նպատակային օգտագործման համար կարևորվում է բուսաբուծական մթերքների իրացման խնդիրների լուծումը:
6. Հողաբարելավման համալիր միջոցառումների իրականացումը աղակալած հողերի կրկին շրջանառության մեջ վերականգնման Արարատյան դաշրի գրունտային ջրերի մակարդակի և նորմատիվային մակարդակի պահպանման խնդիրների լուծումը և այլն:

Գրականություն

1. Սիմոնյան 1. Հողային ռեսուրսների դեգրադացիայի բնապահպանական հետևանքները,
2. ՀՀ տարածքում տեխնածին ախտոտված հողերի մոնիթորինգի իրականացման մեթոդաբանություն ՀՀ կառավարության 18.08.20110 1192 Ն որոշման հավելված,
3. ՀՀ կառավարության գյուղի և գյուղատնտեսության կայուն զարգացման ծրագրի նախագիծ 2015
4. Ռ. Ա. Էդիյան «Հողային ծածկույթ»
5. Ա. Ա. Ասլանյան Լ. Ա Չոհրաբյան «Հայաստանի ֆիզիկական աշխարհագրություն »